Այս դասի (մոտիվացնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև ***4 ժամ***:

ԴԱՍ 10

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ, ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԿԱՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում և հեռաուսուցման փաթեթի կրիչում)

Մինչև 5 րոպե

Անչափահասների արդարադատության համակարգի կարևորագույն բաղադրիչներից է ոչ միայն մասնագիտացված դատարանը, այլև երեխաների սոցիալական ներառումը, վերականգնումը և վերասոցիալականացումը, որոնք իրականացվում են օգնող մասնագետների, հիմնականում՝ սոցիալական աշխատողների, սոցիալական մանկավարժների և հոգեբանների կողմից:

Անչափահասների հետ աշխատող տարբեր մասնագետների փորձը վկայում է, որ զուտ պատժի կիրառումը չի կարող կրճատել հանցագործությունների թիվը: Անհրաժեշտ է

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:

Մինչև 180 րոպե

կարևորել նաև անձի վերասոցիալականացմանն ուղղված միջոցառումները: «Արարք-պատիժ» մոտեցումը ենթադրում է, որ իրավախախտ վարք ցուցաբերող անհատը խնդիրներ է ստեղծում հասարակության և իր համար, ուստի նրան պատժում են հիմնականում մեկուսացման միջոցով: ՔԴՕ մի շարք հոդվածներ նախատեսում են մանկավարժի մասնակցությունը անչափահասի մասնակցությամբ դեպքերի քննության ժամանակ: Սակայն միայն մանկավարժ մասնագետն ի վիճակի չէ լիարժեք կատարել վերականգնողական արդարադատության պահանջները: Ժամանակակից աշխարհում տեղի է ունեցել մասնագիտացումների նեղացում և տարբերակում, ինչն ապահովում է ավելի նպատակային գործունեություն յուրաքանչյուր դեպքի համար: Իրավախախտում կատարած անձանց իրավախախտների ուղղման գործում տարբեր երկրներում հաջողությամբ կիրառվում է սոցիալական աշխատանքը: Սոցիալական աշխատողների, սոցիալական մանկավարժների և հոգեբանների մասնագիտական գիտելիքներն ու կարողություններն այսօր լայնորեն կիրառվում են պրոբացիոն ծառայությունում, մեդիացիայի գործընթացում, կանխարգելիչ և վերականգնողական արդարադատության համակարգի այլ ծառայություններում: Յուրաքանչյուր դեպք դիտարկելիս դատարանը փորձում է օրենքի շրջանակներում անհատականացնել դեպքը, հաշվի առնել դրա առանձնահատկությունները: Իսկ այդ գործընթացն ապահովող կարևոր դերակատարը սոցիալական աշխատողն է:

Փորձե՛ք հիմնավորել դեպքերի քննության ժամանակ մանկավարժի մասնակցության անհրաժեշտության գաղափարը:

Անչափահասների արդարադատության շրջանակներում մանկավարժների, սոցիալական աշխատողների և առհասարակ օգնող մասնագետների դերը կարևորվում է մի շարք առումներով: Օգնող մասնագետները անչափահասների արդարադատության համակարգում լուծում են կարևորագույն խնդիր՝ անչափահասի սոցիալ-հոգեբանական զարգացման

ապահովումը և վարքի շտկումը:

Անչափահասների հարցերով արդարադատությունը անչափահասին չի դիտարկում միանշանակ մեղավոր, այլ դիտարկում է որպես սոցիալական միջավայրում, այսպես կոչված, «դժվար հասանելի» ռեսուրսների կամ այդ ռեսուրսների ոչ հավասար բաշխելու պատճառով տուժած անձ, ով այդ ռեսուրսների համար մղվող «պայքարում» կարող է երբեմն դրսևորել հակասոցիալական վարք: Մոտեցումը կիրառվում է այն համոզմունքից ելնելով, որ հասարակությունը չպետք է պատժի երեխային, այլ պետք է օգնի վերջինիս գիտակցելու իր արարքը և փոխհատուցելու վնասը ոչ թե ազատազրկման, այլ նրան հասարակություն վերաինտեգրելու միջոցով:

Իրավախախտում կատարած անչափահասների հետ աշխատանքում օգնող մասնագետների գործունեությունը հնարավորություն է տալիս.

1. Խորությամբ ուսումնասիրել հանցագործությանը դրդող պատճառները՝ հիմնվելով անչափահասի և նրա ընտանիքի կարիքների ամբողջական գնահատման վրա:

Հատուկ ուշադրություն դարձրե՛ք կետերին:

2. Մեղմել դատավճիռը, անգամ հնարավոր որոշ դեպքերում կանխել իրավախախտում կատարած անչափահասի ազատազրկումը (ինչի բացասական ներգործությունը միանշանակ հաստատված է) [1]:

3. Հիմնավորել մեղադրյալին այլընտրանքային պատժի կամ պայմանական ազատազրկման ենթարկելու որոշման նպատակահարմարությունը:

4. Կազմել անհատական վերականգնման պլան՝ երեխայի և նրա ընտանիքի հետ խորհրդատվությունների հիման վրա անչափահասի վարքն ուղղելու և այդպիսով կրկնահանցագործությունը կանխարգելելու նպատակով:

5. Իրականացնել անհատական ծրագրեր՝ նախաձեռնելով միջամտությունների մի ամբողջ շարք, որը կարող է ընդգրկել սոցիալական դեպքերի հետ անհատական աշխատանք, խմբային աշխատանք, ընտանեկան և անհատական թերապիա:

6. Համագործակցել կրթական հաստատությունների հետ՝ երեխաներին վերաինտեգրելու կրթական համակարգ:

7. Ստեղծել համագործակցության հիմքեր և համագործակցել բոլոր այն գործակալությունների և շահագրգիռ կազմակերպությունների հետ, որոնք առնչվում են տվյալ դեպքի հետ:

Փորձե՛ք ուրվագծել նշված մասնագետների հետ Ձեր համագործակցության եզրերը:

Սոցիալական դեպքի արդյունավետ վարումը հնարավոր է բազմամասնագիտական թիմի արդյունավետ համագործակցության դեպքում: Որպես կանոն, իրավախախտում կատարած անչափահասների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի անդամ են հանդիսանում սոցիալական աշխատողը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը և հարակից այլ մասնագետներ: Թիմում ընդգրկվում են նաև այն մասնագետները, ովքեր քաջատեղյակ են ընտանիքից կամ երեխայից, ինչպես, օրինակ՝ երեխայի հետ աշխատող ոստիկանը, պոլիկլինիկայի բժիշկը, ուսուցիչը և այլն: Մասնագիտական թիմում սոցիալական աշխատողը հանդիսանում է թիմի համակարգող, ում պարտա-

կանությունների մեջ է մտնում տարբեր մասնագետների գործողությունների համաձայնեցումը: Սոցիալական դեպք վարողը խնդիրը դիտարկում է որպես առաջադրանքների շարք, որոնք պետք է կատարվեն աջակցային ցանցի կողմից:

Անչափահասների արդարադատության համակարգում բազմամասնագիտական թիմի վերականգնողական մոտեցումները տարբերվում են՝ կախված աշխատանքի համատեքստից և այն կառույցից, որում աշխատում է մասնագետը:

Ըստ այդմ՝ անչափահասի հետ վարվող աշխատանքում բազմամասնագիտական թիմի ներգրավումը արդարադատության համատեքստում արդյունավետ է հետևյալ մակարդակներում.

- դատարանում իրականացվող վերականգնողական աշխատանք,
- ոստիկանությունում հաշվառված և համայնքային վերականգնողական կենտրոն ուղղորդված անչափահասների հետ աշխատանք,
- քրեակատարողական հիմնարկում իրականացվող վերականգնողական աշխատանք:

Բազմամասնագիտական թիմի կարևորագույն նպատակն է անչափահասի վերականգնման գործընթացը կազմակերպել դեռևս քննչական փուլում, քանի որ անչափահասների իրավունքների պաշտպանության լավագույն ձևն է համարվում սոցիալական ադապտացիայի, ընտանիքում, համայնքում, դպրոցում կամ այլ ուսումնական հաստատությունում կոնֆլիկտների հաղթահարման գործընթացների կազմակեր-

պումը: Այդ իսկ պատճառով օգնող հարաբերությունների հաստատումը հանդիսանում է անչափահասների արդարադատության համակարգի կարևոր գործառույթներից մեկը: Կարևոր են նաև օգնող մասնագետների և քննչական մարմինների միջև համագործակցությունը, ինչպես նաև նախաքննության փուլում տարվող աշխատանքները: Այս փուլում հոգեբանը ունենում է մի շարք հանդիպումներ իրավախախտում կատարած անչափահասի և նրա ընտանիքի հետ, քանի որ այս փուլը բավական սթրեսային է ինչպես շահառուի, այնպես էլ նրա ընտանիքի համար (ազատազրկման հետ կապված վախ, ապագայի անորոշության վախ և այլն):

Սոցիալական մանկավարժը նախնական տեղեկատվություն է հավաքագրում իրավախախտում կատարած անչափահասի և նրա վրա ազդող դաստիարակչական գործոնների վերաբերյալ: Սոցիալական աշխատողը այս փուլում կապ է հաստատում բոլոր այն կառույցների հետ (ընտանիք, բուժհաստատություն, դպրոց, համայնք, սոցիալական ծառայություններ և այլն), որոնք ինչ-որ կերպ առնչվում են իրավախախտում կատարած անհատի հետ և հավաքագրում է իրեն անհրաժեշտ բոլոր տվյալները, որ անհրաժեշտ են հետագա գործողությունների պլանավորման համար: Դատարանում ներգրավված սոցիալական աշխատողը պատասխանատու է ուղղակիորեն աշխատելու այն երեխաների և երիտասարդների հետ, ովքեր անցնում են դատական գործընթացով որպես մեղադրյալներ, տուժողներ և վկաներ:

Երբ անչափահասը հանդես է գալիս որպես մեղադրյալ, սոցիալական աշխատողը հանդես է գալիս նախադատարանային սոցիալական զեկույցով, որտեղ մանրամասնորեն բացահայտում և հիմնավորում է անչափահասի կողմից գործած հանցանքի պատճառները, ինչպես նաև հանդես է

Փորձե՛ք առանձնացնել սոցիալական աշխատողի հետ համագործակցության առավելությունները

գալիս առաջարկություններով՝ պատժի և վերականգնման վերաբերյալ: Սոցիալական տեղեկատվության զեկույցների օգտագործումը դատավճիռը կայացնելու գործընթացում հնարավորություն է տալիս դեպքի քննարկման ժամանակ հաշվի առնել բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք հաստատում են անհատի մեղավորությունը կամ անմեղությունը:

արդարադատության համակարգի և անչափահասի շահերի մակարդակներում:

Դատարանում բազմամասնագիտական թիմի աշխատանքը իրականացվում է 2 հիմնական ուղղություններով: Դրանք են՝ աշխատանք երեխաների և ընտանիքների հետ, աշխատանք սոցիալական ցանցի հետ:

Երեխաների և ընտանիքների հետ աշխատող սոցիալական աշխատողից պահանջվում է.

- աշխատել երեխաների, երիտասարդների և նրանց ընտանիքների հետ՝ նրանց կարիքների ամբողջական գնահատման նպատակով, մասնավորապես, պարզել հանցագործության իրականացման պատճառները,
- մշակել անհատական վերականգնման պլան յուրաքանչյուր երեխայի համար՝ երեխայի և նրա ընտանիքի հետ խորհրդատվությունների արդյունքում,
- իրականացնել անհատական ծրագրեր՝ նախաձեռնելով միջամտությունների մի ամբողջ շարք, որը կարող է ընդգրկել սոցիալական դեպքերի հետ անհատական աշխատանք, ընտանեկան աշխատանք, ինչպես նաև երեխայի պատժի իրականացման վերաբերյալ հանդես գալ համապատասխան առաջարկություններով:

Սոցիալական ցանցի հետ աշխատանքը ենթադրում է հանդիպումներ և քննարկումներ սոցիալական ցանցի անդամների հետ երեխայի հետագա սոցիալական վերականգնման գործընթացի իրականացման ընթացքի վերաբերյալ: Երեխայի սոցիալական ցանցը ներառում է տվյալ սոցիալական դեպքի հետ առնչվող բոլոր կազմակերպություններն ու շահագրգիռ կողմերը (ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող բաժիններ, համայնքային վերականգնողական կենտրոններ, երեխաների իրավունքների պաշտպանության բաժին Երևանում, իսկ մարզերում՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ, համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, ընտանիք, կրթական և առողջապահական հաստատություններ, ՀԿ սեկտորում գործառնող կառույցներ և այլն), ովքեր ևս կստանձնեն պարտավորություններ երեխայի սոցիալական վերականգնումն իրականացնելու գործընթացում:

Դատարանում սոցիալական աշխատողը.

- իրականացնում է մեղադրյալի քրեական գործի բազմակողմանի ուսումնասիրություն, որն ընդգրկում է մեղադրյալի սոցիալ-հոգեբանական և հոգեհուզական առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ ներգրավելով նաև հարակից անհրաժեշտ մասնագետների կարծիքը (ընդ որում՝ ինչպես պետական, այնպես էլ հասարակական սեկտորը ներկայացնող),
- նախնական քննության և դատաքննության ժամանակ մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի ոտնահարման դեպքում կազմակերպում է իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն,

- տեղեկացնում է դատավորին մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի խախտման մասին՝ նման իրավիճակները կանխելու և անչափահասի իրավունքները պաշտպանելու նպատակով,
- մեղադրյալի համար կազմում է հասցեական վերականգնողական պլան և կազմակերպում դրա իրականացումը,
- նյութեր է պատրաստում և անցկացնում հաշտեցման գործընթացը,
- կազմակերպում է մեղադրյալի հետ անհատական սոցիալական աշխատանք,
- մեղադրյալի սոցիալ-հոգեբանական վիճակի մասին իրականացված հետազոտության արդյունքների մասին վերլուծական զեկույցներ է պատրաստում՝ դատավորին ներկայացնելու համար,
- կազմում և ներկայացնում է առաջարկներ, որոնք վերաբերում են մեղադրյալին անհրաժեշտ սոցիալական վերականգնողական օգնության կազմակերպմանը,
- կազմում է իրականացված աշխատանքի մասին հաշվետվություն և այն ներկայացնում դատարան:

Եթե, այնուամենայնիվ, դատարանը նշանակում է անչափահասին ազատազրկումը որպես պատիժ, ապա փոխվում է օգնող մասնագետների միջամտության ուղղությունը: Անչափահասը, մուտք գործելով քրեակատարողական հիմնարկ, բախվում է մի շարք խնդիրների հետ՝ պայմանավորված նոր միջավայրով, մեկուսացմամբ, նոր կարգավիճակով և դրանից բխող դերերով, ինչպես նաև շփման նոր ցանցով: Սակայն, անշուշտ, այս խնդիրներից առավել խնդրահարույցն անչափահասի համար թերևս մնում է ընտանիքից բաժանումը:

Ազատազրկման սկզբնական փուլ, երբ օգնող

Ուշադրություն դարձրեք

մասնագետներն անչափահասին նախապատրաստում են նոր միջավայրին, ինչպես նաև հնարավորինս փորձում են պահպանել շահառուի նախկին օգտակար սովորույթները կամ ձևավորել նորերը, օրինակ՝ սպորտով զբաղվելը, կազմակերպել անչափահասի կրթությունը, աջակցել մասնագիտության ձեռքբերման հարցում և այլն: Այս փուլում սոցիալական աշխատողը կապ է հաստատում անչափահասի ընտանիքի հետ և փորձում է ապահովել անչափահասի և իր ընտանիքի միջև կապն ու դրական հարաբերություններն ազատազրկման ողջ ընթացքում: Եթե ընտանիքի հետ հարաբերությունները խաթարված են, սոցիալական աշխատողը իր ջանքերը կենտրոնացնում է դրանք կարգավորելու ուղղությամբ, քանի որ հատկապես քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո ընտանիքի աջակցությունը շատ կարևոր է երեխայի համար: Այս փուլում սոցիալական աշխատողը բազմամասնագիտական թիմի և շահառուի հետ համատեղ կազմում են սոցիալական վերականգման պլան, որն ուղղված է անչափահասի առջև ծագող հիմնախնդիրների լուծմանը, նրա վարքի փոփոխության շարժառիթների առաջացմանը, ինքնագիտակցության զարգացմանը և առավել ընդունելի արժեքային համակարգի ձևավորմանը:

ազատազրկման տարբեր փուլերում բազմամասնագիտական թիմի անդամների աշխատանքի նպատակադրումների փոփոխությանը:

Երբ անչափահասն արդեն ադապտացվել է, և սոցիալական վերականգման պլանն արդեն հստակ մշակված է, սկսվում է **բուն միջամտության փուլը**: Այս փուլում բազմամասնագիտական թիմը սկսում է աշխատել առկա և առաջացող հիմնախնդիրների հաղթահարման ուղղությամբ: Մասնավորապես՝ այդ հիմնախնդիրները կարող են լինել առողջական, սոցիալական (ընտանիքից բաժանում, ընտանիքի սոցիալապես ոչ բարենպաստ պայմաններ, ընտանեկան կոնֆլիկտներ /երեխա-ծնող, երեխա-երեխա, երեխա-ընտանիքի տարեց անդամ, երեխա-այլ հարազատներ/, օգտակար

սոցիալական կապերի խզում), հոգեբանական խնդիրներ ինչպես ընտանիքում, այնպես էլ իրավախախտում կատարած անչափահասի կյանքում (ընտանիքից և հասարակությունից մեկուսացման հետևանքով սթրեսային իրավիճակներ, վախ ազատազրկման հետ կապված, նոր անծանոթ միջավայր և այլն), կրթական, իրավական և այլն:

Անչափահասին հասարակությունում վերաինտեգրելն անչափահասների գործերով արդարադատության կարևորագույն սկզբունքներից է: Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կանոնները սահմանում են, որ պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցները՝ արտաքին աշխարհի հետ անչափահասների պատշաճ շփումն ապահովելու համար, որն արդարացի և մարդասիրական վերաբերմունքի նրանց իրավունքի մի բաղադրիչն է: Անչափահասները պետք է հնարավորություն ունենան շփվելու իրենց ընտանիքների, ընկերների, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նրանց պետք է թույլատրվի դուրս գալ հաստատությունից՝ ընտանիքին այցելելու, կրթություն կամ մասնագիտական ուսուցում ստանալու կամ այլ կարևոր նկատառումներից ելնելով (Կանոն 59) [2]:

Քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո վերաինտեգրման գործընթացը բազմամասնագիտական թիմի կողմից շարունակվում է, և այստեղ սոցիալական աշխատողը մի քանի ամիսների ընթացքում իրականացնում է շարունակական վերահսկում:

Անչափահասների վերաինտեգրումը սովորաբար հանդիսանում է համայնքի գործառույթ: Համայնքային վերականգնողական կենտրոնները անհատական զարգացման ծրագրերին համապատասխան իրավախախտում կատարած անչա-

փահասներին տրամադրում են սոցիալ-հոգեբանական, կրթական և պրակտիկ հմտությունների զարգացման ծառայություններ, որոնք ուղղված են իրավախախտումներ կատարելու արմատական պատճառների վերացմանը և դրանց ազդեցության հետագա կանխարգելմանը: Վերականգնողական կենտրոնը իրականացնում է վերականգնողական աշխատանք երեխաների հետ, ովքեր ուղղորդվել են ոստիկանության, հանրակրթական դպրոցների և այլ կառույցների կողմից: Այս կենտրոնում ներառված բազմամասնագիտական թիմի անդամների նպատակն է ապահովել անչափահասների լիարժեք սոցիալական վերականգնումը և ներառումը:

«Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների վերաբերյալ CM/Rec (2010) 1-ին առաջարկության մեկնաբանությունները» փաստաթղթում նշված են նաև հանցագործությունից տուժած անձանց հետ աշխատանքի կանոնները (Կանոններ 93-95) [3]: Սոցիալական աշխատողները այս ոլորտում ներգրավվում են հիմնականում անձին պատճառված վնասը գնահատելու համար (ֆինանսական, ֆիզիկական և բարոյական), որի արդյունքում վճիռը մարմնին է ներկայացվում տուժողի վրա հանցավոր գործողությունների ազդեցության մասին տեղեկանք (Victim Impact Statement): Բացի այդ՝ ընդունված կարծիք կա, որ հանցագործություն կատարած անձանց ուղղման միջոց է պարտավորեցնել նրանց կրել իրենց կատարած արարքի հետևանքները՝ հատուցելով կամ վերականգնելով տուժած անձին պատճառված վնասը կամ կորուստը [4]: Սոցիալական աշխատողը ներգրավված է նաև մեդիացիայի գործընթացում:

Այսպիսով, այս դասի շրջանակներում քննարկեցինք

- վերականգնողական արդարադատության համա-

տեքստում սոցիալական ոլորտի տարբեր մասնագետների խնդիրներն ու գործառույթները,

կարևորեցինք

- սոցիալական աշխատողների և այլ մասնագետների դերակատարությունը հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների սոցիալական վերականգնման գործում:

Նշումների համար `

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

ԲԱՌԱՐԱՆ

Այլընտրանքային պատիժ - Դատավորի կողմից արձակված դատավճիռ, որը կապված չէ ազատազրկման հետ և ներառում է տարաբնույթ միջոցառումներ ու միջամտություններ, այդ թվում՝ վերահսկողություն, ուղղորդում և աջակցություն:

Անհատական վերականգնողական պլան - Գրավոր փաստաթուղթ, որն ընդգծում է, թե ինչպես, երբ և ով պետք է բավարարի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի զարգացման կարիքները թե՛ կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ առումներով: Անհատական վերականգնողական պլանը պետք է մշակվի երեխաների, ծնողների և այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ: Այն պետք է կանոնավոր կերպով թարմացվի և վերանայվի բոլոր ներգրավված անձանց կողմից:

Անչափահասների արդարադատության համակարգ - Լայն իմաստով՝ անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կապակցությամբ արդարադատություն իրականացնող հաստատությունների, կազմակերպությունների և ընթացակարգերի ամբողջություն: Անչափահասների արդարադատության համակարգը ենթադրում է ինչպես դատական, այնպես էլ ոչ դատական, նույնիսկ ոչ իրավական մարմինների համալիր, որոնց գործառույթները նախկինում ընկալվել են, որպես օժանդակ, իսկ այսօր դրանց մասնակցությունն ու դերակատարումը կարևորված է արդարադատություն իրականացման գործընթացում [1]:

Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

Մինչև 25 րոպե

Բազմամասնագիտական թիմ - Լայնորեն կիրառվում է սոցիալական դեպքի վարման ընթացքում՝ ապահովելու համար դեպքի ուսումնասիրության և սոցիալական վերականգնման պլանի մշակման ժամանակ բազմակարծություն և երեխա-յակենտրոն որոշումների ընդունում: Որպես կանոն, իրավախախտում կատարած անչափահասների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի անդամ են հանդիսանում սոցիալական աշխատողը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, իրավաբանը և հարակից այլ մասնագետներ:

Մեդիացիա կամ միջնորդություն - Կամավորության և գաղտնիության սկզբունքի վրա հիմնված գործընթաց, որի ընթացքում մեղադրյալին, կասկածյալին և տուժողին հնարավորություն է տրվում ոչ շահագրգիռ միջնորդի աջակցությամբ լուծելու հանցագործության հետևանքով ծագած վեճը և վերականգնելու տուժողի խախտված իրավունքը:

Շեղվող վարք - Տվյալ հասարակության մեջ ընդունված նորմերին հակասող վարք:

Պրոբացիա - Սոցիալ-հոգեբանական ծառայությունների համակարգ՝ ուղղված հանցանք կատարած անձի վերաինտեգրմանը, վերասոցիալականացմանը, նրա կողմից նոր հանցանքների կանխմանը, ինչպես նաև հանրային անվտանգության ապահովմանը: Այն իրականացվում է հանցանք կատարած անձի նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցների, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների, անվտանգության միջոցների կիրառման, պատիժը պայմանակա-

նորեն չկիրառելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի կրումից ազատելու կամ պատժի կրումը հետաձգելու ընթացքում հսկողություն, ուղղորդում և աջակցություն իրականացնելու միջոցով:

Վերասոցիալականացում - Իրավական, կազմակերպական և սոցիալ-հոգեբանական միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է իրավախախտում կատարած անձանց արժեքային կողմնորոշումների և վարքագծի վերափոխմանը՝ հասարակության կողմից ընդունելի նորմերին և վարքի նմուշներին համապատասխան: Վերասոցիալականացումը ներառում է ինչպես աշխատանքային, այնպես էլ կենցաղային հարմարումը:

Սոցիալական ադապտացիա – Անձի հարմարման գործընթացը տվյալ սոցիալական պայմաններին:

Սոցիալական աշխատանքը – Մասնագիտական գործունեություն, որի նպատակն է աջակցել անձանց, սոցիալական խմբերին և համայնքներին՝ լուծելու անձնական և սոցիալական խնդիրները սոցիալական պաշտպանության, օգնության, շտկման և վերականգնման միջոցով: Սոցիալական աշխատանքը նպաստում է հասարակական փոփոխություններին, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Սոցիալական աշխատող - Մասնագետ, ով օգնում է անհատներին, խմբերին և համայնքներին լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները՝ այդ նպատակով օգտագործելով առկա միջոցներն ու հնարավորությունները կամ ստեղծելով նորերը:

Սոցիալական ցանց - Անձի հետ որոշակի կապեր և փոխազդեցություն ունեցող անձանց և սոցիալական կառույցների ամբողջություն, որի արդյունավետ օգտագործումը կարող է հանդիսանալ հիմնախնդիրների հաղթահարման կարևոր ռեսուրս:

Սոցիալական դեպքի վարում - Ծառայությունների և աջակցության ցանցի կազմակերպում, համակարգում և պահպանում՝ բազմազան կարիքներ ունեցող մարդկանց կյանքը բարելավելու նպատակով:

Սոցիալական մանկավարժ - Մասնագետ, ով ուսումնասիրում է անձի դաստիարակության և ձևավորման վրա սոցիալական միջավայրի ներգործությունը:

Սոցիալական վերականգնում կամ ռեաբիլիտացիա - Միջոցառումների համակարգ, որն իրականացվում է պետական և հասարակական կազմակերպությունների կողմից և ուղղված է քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանությանը: Սոցիալական վերականգնման գործընթացը ենթադրում է անձի և հասարակության փոխազդեցություն, որը մի կողմից միտված է հարստացնելու անձի հասարակական փորձը, նրան հասարակական կապերի համակարգ ներառելու նպատակով, իսկ մյուս կողմից խթանում է դրական ներանձնային փոփոխությունները:

Սոցիալապես ոչ բարենպաստ պայմաններ – Կյանքի պայմաններ, որոնք խոչընդոտում են անձի զարգացմանը և ադեկվատ (համապատասխան) գործառմանը:

Վերաինտեգրում - Միջոցառումների համալիր՝ ուղղված անձի

խախտված կամ կորցրած հասարակական կապերի և հարաբերությունների վերականգնմանը, ինչը թույլ կտա նրան լիարժեք գործառնել սոցիալական միջավայրում և փոխազդել այլ անձանց հետ՝ զերծ մնալով հանցավոր վարքագծից:

Վերականգնողական արդարադատություն – Արդարադատության հայեցակարգ, որը շեշտադրում է ոչ թե հանցանք կատարած անձին պետության կողմից քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու անհրաժեշտությունը, այլ, առավելապես, հանցանք կատարած անձի և տուժողի (նրա օրինական ներկայացուցիչների, ծնողների) երկխոսության արդյունքում գործի հանգուցալուծումը, կատարված հանցավոր արարքով պատճառված վնասի, խախտված իրավունքների վերականգնումը, կատարված արարքի արդյունքում հնարավոր բացասական հետևանքների կանխումը, հանցանք կատարած անձի վերասոցիալականացումը և նրա հետագա հանցավոր վարքագծի կանխումը:

Վերականգնողական աշխատանք - Հանցագործություն կատարած անձի՝ հասարակությանը վերաինտեգրելու գործընթաց՝ կամավոր կերպով և վերջնական ազատվելուց հետո՝ կառուցողական, պլանավորված և վերահսկվող եղանակով:

Օգնող մասնագետ - Մասնագետներ, ովքեր նպատակ են հետապնդում բարելավել երեխայի կյանքի որակը, պաշտպանել նրա շահերը և իրավունքները: Հիմնականում խոսքը վերաբերում է հետևյալ մասնագետներին՝ սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, հոգեբան, հատուկ մանկավարժներ և այլն: